«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բանկային գաղտնիքի մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ապահովագրական գործունեության մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կուտակային կենսաթոշակների մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 64-րդ կետով.

«64) **էլեկտրոնային հարթակ-համակարգ՝** ՀՀ արդարադատության նախարարության և Կենտրոնական բանկի կողմից համատեղ սահմանված չափանիշներին բավարարող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ։»։

Հոդված 2. Օրենսգրքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8.1-ին մասով.

«8.1 Բանկային կամ հարակից գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման էլեկտրոնային հարթակ-համակարգի շահագործման և

անվտանգության կանոնները սահմանվում են ՀՀ արդարադատության նախարարության և Կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով։»։

Հոդված 3. Օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասում «փաստաթղթեր վերցնելու» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև էլեկտրոնային հարթակ-համակարգի միջոցով փաստաթղթերի առգրավման» բառերը։

Հոդված 4. Օրենսգրքի 239-րդ հոդվածը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մասով՝

«13. Եթե բանկային կամ հարակից գաղտնիք կազմող փաստաթղթերի առգրավումը կատարվում է էլեկտրոնային հարթակ-համակարգի միջոցով, ապա առգրավման որոշումն այն անձին, որի մոտ կատարվում է առգրավումը, հանձնվում է էլեկտրոնային հարթակ-համակարգի միջոցով, իսկ առգրավման ենթակա փաստաթղթերը ներկայացվում են այդ համակարգի միջոցով.»

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1-ին մասով՝

«13.1. Էլեկտրոնային հարթակ-համակարգի միջոցով առգրավում կատարելու դեպքում առգրավման առանձին արձանագրություն չի կազմվում, իսկ վարույթի նյութերին կցվում է առգրավման կատարման փաստը հավաստող փաստաթուղթը, որը գեներացվում է էլեկտրոնային հարթակ-համակարգի միջոցով։»։

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։
2. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում։

Հանրապետության Նախագահ

Վ. Խաչատուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բանկային գաղտնիքի մասին» 1996 թվականի հոկտեմբերի 7-ի ՀՕ-80 օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Բանկը պարտավոր է դատարանի որոշումը ստանալուց հետո երկու բանկային օրվա ընթացքում վարույթն իրականացնող մարմնին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տվյալ որոշմամբ պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը՝ փակ և փակվող մասում գործադիր մարմնի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կողմից ստորագրված ծրարում, բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված էլեկտրոնային հարթակ-համակարգի միջոցով ստացվող բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների և փաստաթղթերի։ Բանկին արգելվում է իր հաճախորդներին տեղեկացնել նրանց մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրելու փաստի վերաբերյալ։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հանրապետության Նախագահ

Վ. Խաչատուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՊԱՀՈՎԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-177-Ն օրենքի 112-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Ապահովագրողը, վերաապահովագրողը, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձը և Բյուրոն պարտավոր են դատարանի որոշումն ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, վարույթն իրականացնող մարմնին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տվյալ որոշմամբ պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը՝ փակ և փակվող մասում գործադիր մարմնի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կողմից ստորագրված ծրարում, բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված էլեկտրոնային հարթակ-համակարգի միջոցով ստացվող ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների և փաստաթղթերի: Ապահովագրողին, վերաապահովագրողին, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձին և Բյուրոյին արգելվում է իր հաճախորդներին (Բյուրոյի դեպքում՝ իր անդամների հաճախորդներին) տեղեկացնել նրանց մասին ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները նախաքննություն իրականացնող մարմիններին տրամադրելու փաստի մասին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հանրապետության Նախագահ

Վ. Խաչատուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հարկային մարմինը պարտավոր են դատարանի որոշումն ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, վարույթն իրականացնող մարմնին կամ նրա լիազորած անձին տրամադրել տվյալ որոշմամբ պահանջվող տեղեկությունները, բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված էլեկտրոնային հարթակ-համակարգի միջոցով ստացվող կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունների։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հանրապետության Նախագահ

Վ. Խաչատուրյան